«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Արժեքային համակարգի ստեղծումը Պետրոս Դուրյանի «Տրտունջք» և «Զոչում» բանաստեղծությունների դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ՝ Գրականություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Լուսինե Հովհաննիսյան

ՄԱՐԶ՝ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Մ. Իշխանի անվան հ. 5 հիմնական դպրոց

Պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Բովանդակություն

1. Ներածություն: Արժեքային համակարգը դպրոցում_____ 3
2. Գլուխ 1 «Բանաստեղծի կյանքի երկու օրը»_____ 4
3. Գլուխ 2 «Տրտունջք» բանաստեղծության վերլուծությունը_____ 7
4. Գլուխ 3 Կորստյան ցավը և մարդկային տագնապը «Տրտունջք» և «Ձղջում» բանաստեղծություններում_10
5. Գլուխ 4 «Տրտունջք» և «Ձղջում» բանաստեղծությունների համեմատությունը_____ 11
6. Գլուխ 5 Սովորողների ինքնուրույնությանն ու նախաձեռնողականությանը նպաստող հնարքներ և մեթոդներ Դուրյանի բանաստեղծությունները դասավանդելիս: Արժեքայի համակարգի ձևավորում ___ 13
7. Եզրակացություն_____ 18
8. Օգտագործված գրականության ցանկ_____ 19

Ներածություն: Արժեքային համակարգը դպրոցում

Շատերս ենք կարևորում արժեքների ձևավորումը նոր սերնդի մոտ և շատ անգամ նոր բառերով փորձում արժևորել գեղարվեստական գործը և դրա համար դիմում բազում մեթոդների՝ հոգեբանական ազդեցություն ունեցող, ներանձնային, հայրենասիրական և այլն: Մեր ենթագիտակցության մեջ հայտնվում են նոր իմաստներ, որոնք էլ մեզ օգնում են դասի ընթացքում մեր իսկ ցանկացած արժեքային համակարգի ազդեցությունը փոխանցել սովորողներին: Իսկ ի՞նչ է արժեքը:

Արժեքն այն է, ինչի համար կյանքում մեծ գին ենք վճարել: Վճարի արժեքներն էլ շատ տարբեր են լինում՝ հույզեր, զոհաբերութուններ, հայրենակիցների, նախնիների, հարազատների կորուստ, կորցրած հող, հայրենիք: Զգացմունքախառն հեկեկանքները փոխում են մարդու ներաշխարհն ու գնահատելու, արժևորելու, ունեցածն ու եղածը պահպանելու հնարավորություն են ստեղծում: Ցավոք, արժևորումն սկսվում է այն պահից, երբ կորցրածդ ես գնահատում: Ինչպես կասեր Պ. Սևակը. «... ցավով զգացի, որ կտրվելուց հետո է երևում ծառի բուն հաստությունը»:

Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Ասում են՝ հեշտ, առանց կորուստների ու հաղթահարումների ապրելը երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձևավորման: Գրականության դասերին շատ հաճախ անդրադարձ է արվում տվյալ ստեղծագործության արժեքային համակարգին՝ ի՞նչ սովորեցի, ինչպե՞ս կօգտագործեմ, ինչո՞ւ է դա ինձ անհրաժեշտ հարցերի միջոցով: Երբեմն սովորողների մեջ այս հարցերի պատասխանները տրվում են՝ շրջանցելով արժեքային համակարգը, ինչը հավասարազոր է դպրոցում կերտվող հայրենասիրական մոտեցումներից մի փոքր հեռացմանը: Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը և տարածվում է անմարդկայնությունն ու անտարբերությունը: Մարդիկ կարող են երջանկությունից զրկվել, կթուլանա տնտեսությունն ու հանցագործությունները կավելանան: Մեծ է ուսուցչի դերը՝ հատկապես գրականության դասերին, երբ անհրաժեշտություն է դառնում այս կամ այն ծրագրային երկի միջոցով վեր հանել արժեքայնությունը, հենց դրանով կրթել և ուղղորդել սովորողին: Կրթության հենքը և գլխավոր իմաստը արժեքային համակարգի ձևավորումն է: Այսպես պետք է մտածի յուրաքանչյուր ուսուցիչ, որովհետև հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ և այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում երեխան իր կյանքի լավագույն ժամերն է անցկացնում՝ կոփվելով և թրծվելով իրեն բաժին հասած թե' ուրախությունից, թե' ցավից, թե' պարտություններից ու հաղթանակներից: Եվ եթե սովորողն ընկալում է համակեցության նորմերը և ընդունում դրանք, ապա նրա ստացած պտուղները կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, ոչինչ չասող ճշմատությունները:

21-րդ դարում աշակերտների մոտ արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը հասնելու և զարգացնելու համար անհրաժեշտ են նորանոր հնարքներ և մեթոդներ:

Գրականության դասաժամերին ուսուցչի հիմնական նպատակը եղել և մնում է երկերի մեջ խորհրդավոր գեղեցկությունների բացահայտումը: Այդ նպատակին հասնելու համար կան տարբեր հնարքներ, խաղային վարժություններ, ինքնուրույն խոսքին նպաստող մեթոդներ, ինքնուրույնության, ստեղծագործական ունակությունները խթանող զրույց-քննարկումներ, անավարտ հարցադրումներ....

Դասավանդման պրոցեսում սովորողի մոտ պետք է դաստիարակվի և զարգացվի ունակություններ և հմտություններ՝ ինքնուրույն եզրահանգումներ անելու, ճանաչելու, ըմբռնելու, արտահայտվելու, ստեղծելու և մեկնաբանելու տարբեր հայեցակարգեր, փաստեր, կարծիքներ՝ օգտագործելով նաև մեդիա դաշտը:

Ինքնուրույնության հասնելու կարևոր նախապայմաններից են նախաձեռնողականությունը և ստեղծագործական ունակությունների դրսևորումը:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում են հստուկ մոտեցումներ: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում, որը հատկապես միտված է արժեքային համակարգի ձևավորմանը, անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել հայրենասիրությունը զարգացնող բազմազան հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Արժեքային համակարգի ձևավորումն ապահովվում է նպատակաուղղված գաղափարների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ արժեքների մասին խոսելը, ուսուցչի կողմից առաջարկվում է կարդալ համապատասխան նյութեր, դրանց վերաբերյալ տրվում են առաջադրանքներ, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով: Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ

առաջադրանքը կատարել ինքնուրույն, որտեղ և հայտնաբերում կամ գտնում են արժեքը՝ արժևորելով մայրենի լեզուն՝ որպես ազգապահպանության, ազգային լեզվամտածողության, մշակութային արժեքների փոխանցման, սեփական անձի ձևավորման և ինքնաճանաչման կարևոր գործոն:

Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ: Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Մեր առջև դրված վերջնակետին հասնելու համար հստակ ձևակերպենք .

Նպատակը.

1. Աջակցել ընկալելու արժեքային համակարգը և ձեռք բերել արժևորելու կարողություն:
2. Զարգացնել գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողունակություններ, դաստիարակել դասից դաս, դասարանից դասարան նրանց կարողություններն ու հմտությունները:
3. Սկսել զարգացումը / ինքնուրույնություն, նախաձեռնություն, ստեղծագործական ունակությունների/ տարրական դասարաններից: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:
4. Դաստիարակել հայրենիքը ճանաչելու ցանկություն և զարգացնել այն կարողությունները, որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատատարելագործման համար:

Խնդիրները.

1. Կազմակերպել խմբային աշխատանք:
2. Նախապատրաստական աշխատանքները հստակ ներկայացնել և բացահայտել խմբային աշխատանքոմ պատասխանատու աշակերտներին:
3. Ընդգրկել բոլորին և կիրառել բարդության տարբեր աստիճանի հանձնարարականներ:

Նյութի լիարժեք ուսումնասիրության համար պետք է հստակ թեմատիկ բաժանում. ինչի՞ միջոցով ի՞նչ ստանալ: Պայմանականորեն մեր աշխատանքը բաժանենք 4 մասերի:

1. Բանաստեղծի կյանքի երկու օրը:

2. «Տրտունջք» բանաստեղծության վերլուծությունը:

3. Կորստյան ցավը և մահվան տագնապը բանաստեղծության մեջ:

4. «Տրտունջք» և « Ձղջում» բանաստեղծությունների համեմատությունը:

Գլուխ 1.

Բանաստեղծի կյանքի երկու օրը

Ուսուցչի առաջին նպատակը պետք է լինի բացահայտել Պետրոս Դուրյան գրողի գեղարվեստորեն «տրտնջալու» և «Տրտունջք» լեգենդի հիմնական ասելիքը:

Ի՞նչ է մտածում ժամանակակից մարդը Դուրյանի «Տրտունջքի» մասին, ի՞նչ հոգեկան աղերսի մեջ է մտնում և ի՞նչ երանգներ է բացում: Հավերժական երկերը հավերժական նյութ են նաև գրականագիտության համար, ամեն անգամ տեղի է ունենում կենսական և գեղագիտական նորագույն հայացքի հանդիպումը գեղեցկության հետ...
Նման հարցադրումներով ուսուցիչը կարող է հասնել նրան, որ աշակերտը սկսի ինքնուրույն հետազոտելու և այս հարցադրումներին պատասխանելու համար նախապատրաստի որոշակի հետազոտություն, ինչն էլ կդառնա այն մեծ ու կարևոր արդյունքը, որին անվանել ենք արժեքային համակարգ: Արժևորել զգացողությունն ու դրանից բխող գաղափարները: Տառապել, բայց չթուլանալ, բայց չընկճվել, բայց շարունակել արարել ու գնալ լույսի հետևից:

Կարելի է տալ ուսումնական և հետազոտական ոլորտ.

1. Վահրամ Թերզիբաշյան «Պետրոս Դուրյան», 1959թ.

2. Ս. Սարգսյան «Պետրոս Դուրյան», 1959թ.

Սովորողներն ակամա կսկսեն խորհել արվեստի երկի հավերժության գաղտնիքի մասին: Հավակնություն չունենալով միանգամից սպառելու «Տրտունջքի» աշխարհը՝ պետք է ժամանակ տալ աշակերտներին խորհելու. «Ո՞վ է Դուրյանը. բարեպաշտ –հավատացյալ, թե՞ աթեիստ»: Նպատակահարմար է ներկայացնել նաև Շարուրյանի տեսակետը.
«Բանաստեղծությունը կապ չունի մահվան տագնապների հետ, չի ծնվել հոգեկան խռովքի պահին, մահվան անկողնում, այլ եղել է լիովին գիտակցված մի ընդվզում, գաղափարական որոշակի համոզմունքների արդյունք»:
Բնականաբար նման խորհրդածությունները կարող են Սովորողների մոտ ծնել նաև հակասակություններ. մի՞թե ընկերոջ՝ Վարդանի մահը ինքնին չէր կարող հոգեկան խռովքի պատճառ դառնալ, մի՞թե ընկերոջ թարմ հողաթումբը չէր կարող բորբոքել Դուրյանի գերզգայուն հոգին:
Այս ենթաթեմայի շուրջ քննարկումը կարելի է ավարտել հետևյալ ձևակերպմամբ.
«Աստված մարդուն ստեղծել է ապրելու և սիրելու համար, մարդն ունի երազներ, նա կոչված է

կյանքը վայելելու: Ամեն ինչ՝ աստղերն ու սոխակը, սյուքն ու քամին, թավուտներն ու տերևները սահմանված են երջանկության համար: Իսկ Աստծո կամքով Դուրյանը դատապարտված է մեռնելու: Թերևս նա իրավունք ուներ ցավելու, տագնապելու, բողոքելու»:

Այստեղ արդեն պետք է քննարկումն ավարտել՝ աշակերտների մեջ հետաքրքրությունը չնվազեցնելու և ինքնուրույն դատողությունների համար հարթակ թողնելու նպատակով:

Գլուխ 2

«Տրտունջք» բանաստեղծության վերլուծությունը:

Կարճ դասախոսությամբ պետք է բացահայտել բանաստեղծության գաղափարական բովանդակությունը:

Վարդան Լյութֆյանի մահից հետո Դուրյանը հաճախակի է անդրադարձել մահվան թեմային: Մահվան ուրվականը թևածում էր Դուրյանի վերջին տարվա բանաստեղծությունների մեջ: 1871 թ-ին գրած բանաստեղծությունների մեծ մասում սավառնում է մահվան հրեշտակը՝ մերթ մեռնող հայրենիքի /«Իմ ցավը»/, մերթ ընկերոջ /«Հուշք»/, մերթ մոր, մերթ բնության կերպարներով:

Հյուծախտը Դուրյանին ուղեկցել է մի ամբողջ տարի՝ Վարդանից առաջ և հետո: Արագ առաջացող հիվանդության ճիրաններում և, բնականաբար, դեռ նախնական սուր կասկածների և տագնապների մեջ, երբ արդեն զգում էր, որ ինքը «Վարդանի շարունակությունն է», նա գրել է լավագույն բանաստեղծությունների մեծ մասը: Մի՞թե սեփական ցավի տևական զգացողությունը չէր կարող հետք թողնել խոհերի ու զգացումների վրա, և արդյոք ընկերոջ մահն էլ չի՞ արագացրել սեփական տագնապներն ու ցավերը:

Քնարական բանաստեղծությունների համար միշտ չէ, որ պետք է փնտրել ուղիղ հասցե, անմիջական պատճառ ու փաստական հիմք: Բայց այն, որ Դուրյանը չափազանց զգայուն էր, դա անհերքելի է: Հենց այդ գերզգայուն պատանին իր կայքնի երկու օրում գրեց « Տրտունջքն» ու «Ձղջումը»:

Դուրյանը բնավ էլ միտք չի ունեցել «Տրտունջքի տողերը բաժանել թեմատիկ և գաղափարական երեք կամ հինգ մասերի: Նա ժամանակ չուներ այդ մասին մտածելու. ապրում էր ճակատագրական պահեր: Գրել է թափով, արտահայտել սրտի մեջ կուտակված թաքուն ցավերը, գրել է բաժանման խոսքն աշխարհին: Տագնապի ճակատագրական պահն ունի մի առանձնահատկություն. հաճախ զորացնում, ի մի է հավաքում մարդու ներքին կարողությունները, շիկացնում, ամբողջացնում տպավորություններն ու խոհերը:

Բանաստեղծության մեջ ամենից առաջ մարմնավորվում է անհատը՝ դիմադրության ու երազների ամբողջությամբ: Կորստյան ցավն ու մահվան տագնապը հսկայական չափով մեծացնում են կյանքի ու տիեզերքի հմայքը: Սա է թերևս բանաստեղծության գաղափարական խորհուրդը.

Էհ, մնաք բարով, Աստված և արև,

Որ կը պըլպըլաք իմ հոգվույս վերև...

Աստղ մ’ալ ես կ’երթամ հավելուլ երկնից,

Աստղերն ի՞նչ են որ եթե ո՛չ անբիծ

Եվ թշվառ հոգվոց անեծք ողբագին,

Որ թըռին այրել ճակատն երկնքին.

Պահե՞լ է Աստված բանաստեղծին մի «ետին» կյանք, երբ արդեն փակում է մարդու հայացքը այս աշխարհի հանդեպ, խլում շրթունքների թրթիռը, եթե կորչելու են հոգին, հայացքը, խոսքը, թրթիռը, եթե..... այստեղ է ծագում հենց գլխավոր հարցը. կենդանի գեղեցկության կարոտ... ահա սա էլ դառնում է իր և Աստծո միջև բանավեճի ակունք:

Իսկ թե կորնչի պիտի իմ հուսկ շունչ,

Հոս մառախուղի մեջ համր անշըշունջ,

Այժմեն թո՛ղ որ շանթ մ’ըլլամ դալկահար,

Պլլըվիմ անվանդ մռնչեմ անդադար,

Թող անեծք մ’ըլլամ քու կողըդ խըրիմ,

Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:

Կա՞ն թե չկան հանդերձյալ աշխարհը, « ետքի կյանքը», հոգու հայրենիքը: Այս հարցը ստանում է ուրույն պատասխան: Երկնքի հիվանդությամբ բռնված պատանին կապված է երկրի հետ, տառապում այս աշխարհի համար.

Ոհ, կայծ տվե՛ք ինձ, կայծ տվե՛ք, ապրի՛մ.

Ի՞նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՛մ...

Այս ճակատագիրն ի՞նչ սև է, Աստվա՛ծ,

Արդյոք դամբանի մրուրո՞վ է գծված...

Մի անիմանալի գաղտնիքով Դուրյանի մահվան երգը ծավալվում է՝ ընդունելով նոր վտակներ, ի վերջո դառնալով կենսասիրության վարարուն հոսանք: Այս հատվածում կարելի է օգտագործել գիտելիքների բուրգը՝ նախքան ինքնուրույն աշխատանք հանձնարարելը:


Դրական
հույզեր
Օգտակար
տեղեկություններ
տեքստից
Հետաքրքիր փաստեր
տեքստից

Գլուխ 3

Կորստյան ցավը և մարդկային տագնապը

Ուսուցիչը, իր մտքում պահելով նյութի արժևորմանն ուղղված գաղափարը, այս փուլում ձևավորում է խմբեր՝ հստակ ներկայացնելով պահանջները: Ընտրվում են պատասխանատու աշակերտներ և սկսվում է աշխատանքը:

Սովորողները քարտի կամ կպչուն թղթերի վրա մշակում կամ նախապես գրի են առնում տվյալ դասի թեմայի շուրջ 9 գաղափար: Սովորողները քարտերը դասավորում են վերևից ներքև ըստ կարևորության՝ հետևյալ սկզբունքով. 1-ին տողում ընտրում և փակցնում են 1 քարտ, 2-րդ տողում փակցնում են 2 քարտ, 3-րդ տողում՝ 3 քարտ, 4-րդ տողում՝ 2 քարտ և 5-րդ տողում՝ 1 քարտ:



Կարելի է նույնիսկ այս գաղափարները նախապես տալ և առաջարկել դասավորել վերևից ներքև ըստ կարևորության:

1.Կյանքի և սիրո խնդիր
2.Երազող սիրտ
3.Կենսասիրության հզոր բաբախներ
4. Կյանքի երջանիկ ափունքներ
5. Հավերժական վիշտ
6. Կորստյան ցավ
7. Մահվան տագնապ
8. Հզոր ձիրքի և մահվան ծանր զգացողություն
9. Հոգեկան և ֆիզիկական տագնապ

Յուրաքանչյուր ենթակետի մանրամասն վերլուծությունից հետո նոր կարելի է անդրադառնալ հաջորդ թեմային:

Գլուխ 4

«Տրտունջքի» և «Զղջումի» բանաստեղծությունների համեմատությունը

«Տրտունջք» բանաստեղծության ստեղծման օրը արտասովոր էր, նշանակալից հայ գրականության և ոգու համար: Բանաստեղծի ամենադժբախտ օրերից մեկի պատկերը մնում է որպես հավերժական վիշտ ու բորբոքուն վերք մարդկանց հոգում: Բայց դա նաև հայ գրականության մեջ համարվում է «Լուսավոր կիրակի», մեր նոր անձնական քնարերգության սկիզբը, հայ գրականության համամարդկային բարձր լարում ունեցող , խոր հոգեբանությամբ և ոգորումների ներքին լարումով լավագույն երկերից մեկը:

Բայց այստեղ չի վերջանում պատմությունը... Այդ օրը ունեցել է ուրույն վախճան: Բանաստեղծը, կարծես, ասել էր իր վերջին խոսքը կյանքի , աշխարհի և Աստծո մասին:

Ո՜հ, նոքա ամենքը զ՝իս ծաղրեր են...
-Աստուծո ծաղրն է Աշխարհ ալ արդեն...

Բանաստեղծությունն ավարտվում է, բայց հանճարի ապրումներն ու լարումը դեռ շարունակվում են, դեռ մխում են հոգու մարվող կրակները, ինչ-որ բան մնում է չասված:
Փոթորկված կիրքը մեղմանում է: «Օր մը վերջը» ծնվում է «Զղջումը» ՝ մի նոր գլուխգործոց :
Այս բանաստեղծությունը գրված է եղել ազատ ոտանավորով, սակայն Սիմոն Ֆելեկյանը հանգավորել է: Հայտնի է, որ Դուրյանի գրած տողերից շատերն աղավաղվել են: Բայց ոչ մի գործ այնքան չի խաթարվել, որքան «Զղջումը»: Ընդամենը 18 տողանոց այս քերթվածում խմբագրվել է 12-ը: Ո՞րն է սրա պատճառը: Բանն այն է, որ «Զղյումը» ազատ ոտանավոր է, իսկ Ֆելեկյանը , չպատկերացնելով, որ այդպիսի բանաստեղծություն էլ կարող է լինել, հանգավորել է, ինչն էլ թերևս զայրացրել Պ. Դուրյանի եղբորը՝ Ե. Դուրյանին:
Այս բանաստեղծությունը ևս ունի իր ուրույն տեղը հայ բանասիրության մեջ:
Դուրյանը, գրելով ռոմանտիկական ոճի ազդեցության ներքո, վերոնշյալ բանաստեղծությունների միջոցով տարերային ձևով ճանապարհ է բացում նաև նորագույն ոճի, ռեալիստական հոգեբանության և մտածողության առջև:
Իսկ կարելի՞ է համեմատության մեջ դնել այս երկու երկերը:
«Զղջումի» մեջ Դուրյանը զարմանալի բնական երանգներով պատմում է անցած օրվա տագնապների մասին: Նա խաղաղ ու հանգիստ նկարագրում է երեկվա տագնապը, մահվան սարսափները, պաղ քրտինքը և սնարի մոտ կանգնած մորը:

Երեկ երբ պաղ քրտանց մեջ

Սև մըրափ մը կ’առնեի,

Եվ թոշնած զույգ մը վարդեր

Այտերուս վրա կ’այրեին,

Անշուշտ ճակտիս վրա մահու

Դալկություն մը կը պլպլար,

Եվ մահու թռիչ մ’ունեի,

Լըսեցի մորս հեծեծում...

Մեկ օր հետո գրած այս «Զղջումը» մի զրույց է, զարմանալի ու անկեղծ զրույց ցավի, սև մրափի, մահվան տագնապի և սնարի մոտ կանգնած մոր արցունքի մասին: Շոշափելի, գեղանկարչական պատկեր... Այստեղից էլ բխում է նաև բանաստեղծության խտացված իմաստը: Դուրյանը չէր հորինում: Նա գրական խաղի համար ոչ ուժ և ոչ էլ ժամանակ ուներ: Արդեն այրվում էին ֆիզիկական վերջին ուժերը, մնում էր միայն ոգին, բորբոքուն, այրված ոգին: Խաղաղ ու տխուր զրույցի, մանրամասների մթնոլորտում, հանկարծ մի ակնթարթ կայծակում է տառապած մտքի շողը: Եվ կրկին արտասվոր լույսի տակ երևում է մի նոր հրաշք...

Ո՜հ, ներե՛ ինձ, Աստված իմ,

Մորըս արտոսրը տեսի...:

Սեփական դժբախտությունը տեղի է տալիս....Նա տեսել է ամենածանրը և ազդեցիկը՝ մայրական արցունքը: Այդ ծանր ջուրը, այդ կաթիլը, որ խտանում, բյուրեղանում է սիրո ցավից և հրդեհից: Դուրյանը անգամ մահվան տագնապի պահին հանճարեղ ներքնատեսությամբ հայտնաբերում է այս աշխարհի մեծագույն ցավն ու գեղեցկությունը, սիրո և գթասրտության տարազով ծածկում մոր անկրկնելի կերպարը: Նա մոռանում է ինքն իրեն՝ տառապելով մորը բաժին ընկած սև ցավի համար:

Մայրըս անհո՜ւն ցավ մ’ուներ,

Այն սև ցավը ե՜ս էի...

Իսկ այսքանից հետո պնդել, որ այս երկու բանաստեղծությունները անձնական ենթատեքստ չունեն, տեղին չէ: Բանաստեղծությունների յուրաքանչյուր էջից արցունք է հոսում..... Բանաստեղծի, բանաստեղծի մոր, սև տագնապների և անհատական ցավի արցունքներ

Գլուխ 5

Սովորողների ինքնուրույնությանն ու նախաձեռնողականությանը նպաստող հնարքներ և մեթոդներ Դուրյանի բանաստեղծությունները դասավանդելիս: Արժեքային համակարգ

Գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Դիտարկենք այն: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է: Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն: Նրանք զբաղված են ֆուտբոլային հանդիպումներ, սերիալներ դիտելով ու տարատեսակ խաղերով: Աշակերտներին բավականաչափ զբաղեցնում են նաև սոցիալական ցանցերը: Մի խոսքով՝ սովորելու ժամանակ շատ քիչ է մնում: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը: Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան: Որոշ գիտնականներ ավելի հոռետես են և համարում են, որ մարդը կարող է սովորել 4-5 նոր բան:

Այստեղից կարող ենք փաստել. առաջին քայլը պետք է լինի ուշադրության սևեռումը:

Սևեռման տարբեր մոտեցումներ/հնարներ/ կան. «Անավարտ նախադասություններ», «Կռահիր ինքդ», «Մտածիր, վերլուծիր, տուր եզրակացություն»:

Նոր նյութը բացատրելիս կարևոր է օգտագործել գծապատկերներ: Ուսուցչի խոսքը պետք է ուղեկցվի պատկերներով: Ապացուցված է, որ աշակերտներն ավելի լավ են սովորում, երբ խոսքն ու պատկերը զուգակցվում են:

Նոր նյութի մատուցման փուլում շատ կարևոր է նաև արդեն իմացածի հետ կապակցումը: Մարդը սովորում է այն դեպքում, երբ կարողանում է նոր գիտելիքը կապակցել արդեն իմացածի հետ: Հետևաբար՝ նոր նյութը պետք է անընդհատ կապակցել նախկինում ուսումնասիրված նյութի հետ: Այստեղ նպատակահարմար է օգտագործել «Սատանայի վկա» հնարքը: Այս դեպքում ուսուցիչը միտումնավոր սխալ միտք է արտահայտում, որ պարզի՝ արդյոք աշակերտը ուշադիր էր:

Շատ արդյունավետ է «Կենտրոններով աշխատանք» հնարը: Ստեղծվում են 4-5 հոգուց բաղկացած խմբեր: Խմբերը ստանում են տեքստը և մոտենում համապատասխան անվանումներով կենտրոններին: /Խմբերում մասնակիցների ներգրավումը և խմբին համապատասխան կենտրոն ուղղորդելը կարող է լինել ինչպես նպատակային՝ համագործակցություն, որոշակի աշխատանքներում կարողությունների և հմտությունների խորացում, այնպես էլ պատահականության սկզբունքով/:

Կենտրոններ.

- հետազոտողների կենտրոն
- ստեղծագործողների կենտրոն
- գրավոր աշխատանքի կենտրոն

բացահայտողների կենտրոն

Ուսուցիչը կարող է իր հայեցողությամբ ավելացնել կամ պակասեցնել կենտրոնների թիվը՝ փոխելով կամ հարմարեցնելով անունները:
Սովորածը պարզելու համար կարելի է կիրառել Ֆրայերի մոդելը:

Սա շատ արդյունավետ գործիք է սովորածը պարզելու համար: Ուսուցիչը քառաբաժանի կենտրոնում գրում է հասկացության, երևույթի, առարկայի անունը, ապա՝ առաջարկում վերևի ձախ անկյունում գրել հասկացության սահմանումը, վերևի աջ անկյունում այդ հասկացության պատկերային արտահայտությունը: Դա կարող է լինել ձեռքով նկարած պատկեր, լուսանկար, գծապատկեր, աղյուսակ: Ներքևի ձախ անկյունում գրե՛լ օրինակներ, որոնք վերաբերում են այն հասկացությանը, ներքևի աջ անկյունում՝ օրինակներ, որոնք չեն վերաբերում այդ հասկացությանը:



«Վարդ, փուշ, բողբոջ» հնարով կարելի է պարզել դասի ընթացքում չյուրացված, մասամբ յուրացված կետերը:

Մեկ բառ, լավ չեք հասկացել:

Դժվարություններ առաջացան:

Նոր միտք ծագեց

Ձևավորող գնահատականի համար կարելի է օգտագործել տարբեր տաքսոնոմիաներ, թերևս բոլորի սկզբունքները նույնն են:

Վերոնշյալ բոլոր մեթոդների, հնարների հիմնական նպատակը ուսման հանդեպ երեխաների մոտ սեր և պատասխանատվություն արթնացնելն է: Միայն այդ դեպքում մենք կարող ենք մտածել ինքնավերլուծության, ինքնուրույն մտածելակեպի , նախաձեռնություն, ստեղծագործական ունակությունների զարգացման մասին: Իսկ արդեն թեմայի բացարձակ յուրացումից հետո կարելի է խոսել նոր ձևավորվող արժեքային համակարգի մասին, քանզի ԱՐԺԵՔԸ յուրհատուկ ընկալում է, որը ձևավորվում է ոչ միայն ձևավորված գիտելիքի և ինֆորմացիայի, այլև սեփական կենսափորձի հիման վրա:

Գրականությունը, մշակույթը խիստ կապված են մարդու արժեհամակարգի հետ և արժեքը մարդու վերաբերմունքն արտահայտող ցուցանիշն է, այս կամ այն գործից մեծ հետևությունը:

Եզրակացություն

Դուրյանը հայ քնարերգության մեջ թերևս «ամենաոբերգական» ճակատագիր ունեցող հեղինակներից է: Առկա ուսումնասիրության արդյունքում հավաստիացանք, որ աշակերտների մեջ ինքնուրույություն, վերլուծական միտք կարելի է զարգացնել հենց « Տրտունջքի» և « Ձղջումի» համեմատության մեջ: Երկուսն էլ ամենապոետիկ, ամենազգայուն, ամենանուրբ, ամենաասելիք ունեցող երկերից են: «Տրտունջքի» գաղափարական ամենակարևոր կետերը աշակերտները կարող են տարաբնույթ հնարներով և մեթոդներով վերլուծել, կատարել եզրահանգումներ, առանձնացնել տողեր, որոնք «բանալի» կարող են դառնալ ողջ բանաստեղծության համար: Իսկ արժեհամակարգի հարստացման համար կարևոր դիտարկումն էլ կլինի այն, որ սովորողները կկարողանան գնահատել և արժևորել կյանքը, իրենց ինտեգրումը հասարակությանը: Շրջապատի նկատմամբ լինել առավել ուշադիր և կարեկցող: Ձեռք կբերեն ժամանակին կանգ առնելու, զղջալու կամ, որ ավելի բնորոշ էր մեր քննարկած նյութին, ներաշխարհը բացահայտելու կարողությամբ, ինչպես նաև կարժևորեն Դուրյան գրող, քնարերգու, մարդ, սիրող որդի բանաստեղծին:

Պետրոս Դուրյանի այս երկու բանաստեղծություններն էլ ուսումնասիրվել են տարբեր հեղինակների կողմից, որոնք տարբեր մեկնաբանություններով են հանդես եկել: Սա էլ փաստում է հենց այն միտքը, որ աշակերտները ևս կարող են տարբեր տեսանկյուններից հարցը դիտարկել: Անհրաժեշտ է մի փոքր տեղեկատվություն փոխանցել և հետևել երեխաների մտահորիզոնի ծավալմանը, տալ ուղղորդումներ, բայց արդյունքում համաձայնել բոլոր կարծիքներին, չսահմանափակել աշակերտների ինքնուրույն դատողության սահմանները, տալ լիարժեք ազատ արտահայտվելու իրավունք, բայց պարտադիր կատարել մեջբերումներ՝ նյութի վերլուծությունը վերջնական արդյունքի հասցնելու նպատակով:

Ի վերջո, սովորողը կհասկանա, որ ձեռք բերած արժեքներից բխում են հավատն ու սերը: Հավատը նրանց ու մեզ կուղղորդի դեպի հույս և կմղի ապրելուն, արարելուն: Հավատը կողմնորոշիչ կդառնա մեր և նրանց կյանքում: Իսկ սերը միավորվելու ձգտումն է: Սիրո մեջ միավորվում են մարդու արժեքային պատկերացումները: Այլասիրությո՞ւն, թե՞ եսասիրություն. (սեփական անձը սիրելու երևույթ) այս հարցերի համար ևս կգտնվեն պատասխաններ: Երբ կբացահայտվեն սիրո դրսևորումները, սովորողը կհասկանա, որ սիրո մեջ մարդն ավելի պատասխանատու է դառնում ինքն իր նկատմամբ, ձգտում ինքնակատարելագործման: Ահա, թե ինչու սերը մշակութային և գեղեցիկ երևույթ է:

Բանաստեղծությունների ուսումնասիրություններից հետո երեխան կհասկանա, որ հաճախ արժեք է համարվում ճշմարտությունը («Տրտունջքն» ուսումնասիրելիս հատկապես): Կյանքում, թերևս, ճշմարտությունը զոհաբերվում է արժեքներին:

Օգտագործված գրականություն

1. Վահրամ Թերզիբաշյան « Պետրոս Դուրյան», 1959թ.

2. Ս. Սարգսյան «Պետրոս Դուրյան», 1959թ.

3. Պետրոս Դուրյան, Երկեր («Հայ դասականների գրադարան» մատենաշար, բնագրերի պատրաստում, առաջաբան, ծանոթագրություններ), «Սովետական գրող» հրատ., 1981

4. Հերբերտ Սայմոն

5. Պետրոս Դուրյան (Ծննդյան 100-ամյակի առթիվ): Ավանգարդ, 1952

6. Հայ քնարերգուներ, Հատոր 2: Նաիրի, 1996

7. Էլեկտրոնային հարթակ՝ «Վիքիպեդիա», տարբեր հոդվածներ